Հավելված 7
ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ղեկավարի
30-ը մարտի 2026թ. թիվ 95Ա որոշման

Հարց 1

Ի՞նչ նորմատիվ իրավական ակտով է սահմանվում համայնքների վարչական սահմանների նկարագրությունը.

օրենքով:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 5)

Հարց 2

Ե՞րբ է գումարվում նորընտիր ավագանու առաջին նիստը.

ոչ ուշ, քան ավագանու լիազորությունները ստանձնելու պահից քսան օրվա ընթացքում:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16)

Հարց 3

Համայնքի ավագանու որոշումները ընդունվում են.

ավագանու նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16)

Հարց 4

Ի՞նչ իրավական ակտով են սահմանվում համայնքի կամավոր խնդիրները.

սահմանվում են ավագանու որոշմամբ:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 5

Ի՞նչ կարգով կարող է համայնքի ավագանին բողոքարկել համայնքի ղեկավարի որոշումները.

դատական կարգով:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16)

Հարց 6

Համայնքի ավագանու անդամը չի կարող միաժամանակ՝

աշխատել համայնքի աշխատակազմում:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 19)

Հարց 7

Նշվածներից ո՞ր դեպքում են վաղաժամկետ դադարեցվում համայնքի ավագանու անդամի լիազորությունները.

եթե նա զորակոչվել կամ ծառայության է անցել զինված ուժերում և այլ զորքերում:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 22)

Հարց 8

Ի՞նչ չափով ամսական դրամական փոխհատուցում կարող է ստանալ համայնքի ավագանու անդամը իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց.

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի ամենամսյա պատգամավորական ծախսերի մինչև 30 տոկոսի չափով:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 24)

Հարց 9

Նշվածներից ո՞ր դեպքում է վաղաժամկետ դադարեցվում համայնքի ղեկավարի լիազորությունները.

եթե նա դադարել է համայնքի բնակիչ լինելուց:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 26)

Հարց 10

Նշված լիազորություններից ո՞րն է իրականացնում համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը.

ապահովում է ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների և ուղերձների հրապարակումը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 33)

Հարց 11

Նշվածներից ո՞ր մարմիններն են անմիջականորեն իրականացնում հողերի պահպանման և օգտագործման նկատմամբ վերահսկողությունը.

հողօգտագործման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները:

(ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 40)

Հարց 12

Նշվածներից ո՞րն է համարվում համայնքի ղեկավարի ընդհանուր լիազորություն.

հանդես է գալիս տեղական հանրաքվե նշանակելու նախաձեռնությամբ:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 35)

Հարց 13

Նշված լիազորություններից ո՞րն է համայնքի ղեկավարի համար համարվում սեփական՝ քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառում.

կազմակերպում է համայնքի արխիվային գործի վարումը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 36)

Հարց 14

Նշված լիազորություններից ո՞րն է համայնքի ղեկավարի համար համարվում սեփական՝ ֆինանսների բնագավառում.

տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 38)

Հարց 15

Նշվածներից ո՞րն է համայնքի ղեկավարի համար համարվում ընդհանուր լիազորություն.

օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 35)

Հարց 16

Նշված լիազորություններից ո՞րն է համայնքի ղեկավարի համար համարվում սեփական՝ քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում.

կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 42)

Հարց 17

Նշված լիազորություններից ո՞րն է համայնքի ղեկավարի համար համարվում սեփական՝ տրանսպորտի բնագավառում.

իրավասու մարմինների ներկայացմամբ հաստատում և թույլատրում է համայնքային ենթակայության ճանապարհների երթևեկության նշանների տեղակայումն ու հանումը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 44)

Հարց 18

Նշված լիազորություններից ո՞րն է համայնքի ղեկավարի համար համարվում սեփական՝ սոցիալական պաշտպանության բնագավառում.

աջակցում է բնակչության զբաղվածության հետ կապված խնդիրներին:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 48)

Հարց 19

Նշված լիազորություններից ո՞րն է համայնքի ղեկավարի համար համարվում սեփական՝ գյուղատնտեսության բնագավառում.

կատարում է համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և վերանորոգումը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 49)

Հարց 20

Նշվածներից ո՞ր իրավասությունն ունի համայնքի ավագանին արխիվային գործի բնագավառում.

որոշում է համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքի փոխանցումը պետական սեփականության:

(«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 21

Նշվածներից որո՞նք են համարվում համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ.

վարկերի և փոխատվությունների ձևով ներգրավված միջոցները:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 86)

Հարց 22

Նշված լիազորություններից ո՞րն է համայնքի ղեկավարի համար համարվում պետության պատվիրակած՝ կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում.

կազմակերպում է ՀՀ տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 46)

Հարց 23

Ո՞ր չափը <u>չի</u> կարող գերազանցել համայնքի բյուջեի ֆոնդային մասում ձևավորված պահուստային ֆոնդը.

բյուջեի ֆոնդային մասի եկամուտների 30 տոկոսը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 90)

Հարց 24

Ի՞նչ ժամկետում է համայնքի հաստատված բյուջեն ներկայացվում համայնքի բյուջեն սպասարկող պետական ֆինանսների կառավարման բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին.

մեկշաբաթյա ժամկետում:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 92)

Հարց 25

Ի՞նչ պարբերականությամբ է պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը համայնքի ղեկավարին ներկայացնում տեղեկություններ համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի մասին.

ամենօրյա:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 92)

Հարց 26

Ի՞նչ ժամկետում է համայնքի ղեկավարը մշակում համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և ներկայացնում ավագանու հաստատմանը.

իր լիազորությունները ստանձնելու օրվանից հետո՝ չորս ամվա ընթացքում:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 82)

Հարց 27

Ի՞նչ կարգով կարող է համայնքի ղեկավարը բողոքարկել համայնքի ավագանու որոշումները.

դատական կարգով:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16)

Հարց 28

Ի՞նչ է միջհամայնքային միավորումը.

տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կամ հանրային շահերից ելնելով ստեղծված համայնքների միավորում է, որն իրականացնում է օրենքով կամ համայնքների ավագանիների որոշումներով իրեն վերապահված լիազորություններ և գործառույթներ:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 100)

Հարց 29

Ի՞նչ միջոցների հաշվին է իրականացվում համայնքային արխիվների ֆինանսական ու նյութատեխնիկական ապահովումը.

համայնքային բյուջեների միջոցների հաշվին:

(«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 30

Ի՞նչ է տեղական տուրքը.

ՏԻՄ-երի՝ սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ օրենքով սահմանված գործողությունների համար համայնքի բյուջե վճարվող՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է:

(«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 3)

Հարց 31

Ի՞նչ է տեղական վճարը.

տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների

համար համայնքի բյուջե վճարվող, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է:

(«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 3)

Հարց 32

Նշվածներից ո՞րն է Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվող տեղական վճարի տեսակ.

համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար:

(«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 33

Նշվածներից ո՞րն է Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվող տեղական վճարի տեսակ.

համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար:

(«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 34

Ե՞րբ է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, սահմանում տեղական տուրքերի դրույքաչափերը.

համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ:

(«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 11)

Հարց 35

Ե՞րբ կարող են փոփոխվել օրացուցային տարվա համար ավագանու սահմանած տեղական վճարների դրույքաչափերը.

փոփոխության չեն կարող ենթարկվել:

(«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 13)

Հարց 36

Ու՞մ կողմից կարող են սահմանվել տեղական տուրքերի և (կամ) վճարների գծով արտոնություններ.

համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ համայնքի ավագանու:

(«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 16)

Հարց 37

Ի՞նչ է բյուջետային վարկը.

վերադարձելիության, ժամկետայնության, արժեքավորման ու վճարովիության սկզբունքով պետական բյուջեից համայնքներին, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև օտարերկյա պետություններին և միջազգային կազմակերպություններին դրամական տեսքով տրվող միջոցներն են:

(«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 38

Ի՞նչ է բյուջետային փոխատվությունը.

վերադարձելիության, արժեքավորման և ժամկետայնության սկզբունքով առանց վճարովիության սկզբունքի պետական բյուջեից և համայնքների բյուջեներից համայնքներին առանձին ծրագրերի կամ ծախսերի ֆինանսավորման նպատակով դրամական տեսքով տրվող միջոցներն են:

(«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 39

Ե՞րբ է բյուջետային փոխատվությունն ենթակա վերադարձման փոխառուների կողմից.

փոխատվության տրման նույն բյուջետային տարում:

(«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 40

Նշվածներից ո՞ր իրավասությունն ունի համայնքի ղեկավարը՝ թափոնների գործածության ոլորտում.

համայնքի վարչական սահմաններում իրականացնում է չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացումը (լիկվիդացումը):

(«Թափոնների մասին» ՀՀ օրենք, հոդված 11)

Հարց 41

Ո՞ր դեպքում համայնքը կարող է ստանալ նոր փոխատվություն.

նախկինում ստացված փոխատվության գծով պարտքը ամբողջությամբ մարելուց հետո:

(«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 30)

Հարց 42

Համայնքի բյուջեի ո՞ր մաս են պարտադիր ուղղվում վարկային (ներառյալ արժեթղթերի թողարկումից ստացված) միջոցները.

ֆոնդային մաս:

(«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 30)

Հարց 43

Համայնքի ղեկավարը նշվածներից ու՞մ է ներկայացնում բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ավագանու հաստատելուց հետո՝ եռօրյա ժամկետում.

համապատասխան մարզպետին:

(«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 35)

Հարց 44

Ի՞նչ է տեղական հանրաքվեն.

տեղական հանրաքվեն համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու եղանակ է, որն իրականացվում է տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության հանրային հարցերով քվեարկության միջոցով:

(«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, հոդված 2)

Հարց 45

Նշվածներից ո՞ր մարմիններն են հատուցում քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ) պատճառված վնասը.

Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

(ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1063)

Հարց 46

Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային արժեքները.

ՀՀ կառավարությունը:

(ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 66)

Հարց 47

Նշվածներից ո՞ր մարմինն է ապահովում համայնքի տարածքում պետական մշակութային քաղաքականության իրականացումը.

համայնքի ղեկավարը:

(«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 24)

Հարց 48

Նշվածներից ո՞րն է հանդիսանում համատիրության գործունեության հիմնական նպատակ.

օրենքով սահմանված կարգով բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման իրականացումը:

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 5)

Հարց 49

Ովքե՞ր կարող են անդամակցել համատիրությանը.

տվյալ համատիրության մեջ ընդգրկված բազմաբնակարան շենքի (շենքերի), շինության ցանկացած սեփականատեր:

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 25)

Հարց 50

Համատիրության տարեկան հաշվեկշիռը և բազմաբնակարան շենքի տարեկան բյուջեն հաստատվում է.

համատիրության ընդհանուր ժողովում:

(«Համատիրության մասին» ՀՀ օրենք, հոդված 27)

Հարց 51

Ինչպե՞ս է իրականացվում սահմանամերձ տարածաշրջանների նկատմամբ պետական քաղաքականությունը.

սահմանամերձ տարածաշրջանների զարգացման համալիր ծրագրով:

(«Սահմանամերձ տարածաշրջանների մասին» ՀՀ օրենք, հոդված 3)

Հարց 52

Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում համալիր ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման տարեկան համամասնությունները.

ՀՀ կառավարությունը:

(«Սահմանամերձ տարածաշրջանների մասին» ՀՀ օրենք, հոդված 3)

Հարց 53

Ընդունող մարմինը ի՞նչ ժամկետով է հաշվառված նորմատիվ իրավական ակտերը պահում.

անժամկետ:

(«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 26)

Հարց 54

Ե՞րբ է համայնքի ավագանին համարվում կազմավորված.

եթե ընտրվել են ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն երկու երրորդը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 13)

Հարց 55

Ո՞ր մարմինն է կայացնում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշումը.

օրենքով սահմանված իրավասու մարմինները:

(ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 188)

Հարց 56

Ու՞ր է ուղարկվում անժառանգ գույքի ժառանգության իրավունքի վկայագիրը.

տեղական ինքնակառավարման համապատասխան մարմին:

(ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1245)

Հարց 57

Նշվածներից ո՞ր մարմինն է իրականացնում նախնական հսկողություն Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման նկատմամբ.

գանձապետարանը:

(«Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 17)

Հարց 58

Արդյո՞ք թույլատրվում է եղբայրների ու քույրերի որդեգրումը տարբեր անձանց կողմից.

այո, երբ այդ որդեգրումը ելնում է երեխայի լավագույն շահերից:

(ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հոդված 112)

Հարց 59

Ո՞ր մարմինն է կատարում երեխայի որդեգրումը.

դատարանը:

(ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, հոդված 113)

Հարց 60

Ո՞ր հողերն են համարվում ընդհանուր օգտագործման.

բնակավայրերի այն հողատարածքները, որոնք զբաղեցված են փողոցներով, հրապարակներով, զբոսայգիներով և հանրության կողմից օգտագործվող այլ տարածքներով:

(ՀՀ հողային օրենսգիրք, հոդված 10)

Հարց 61

Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում հակահրդեհային նպատակներով ջրօգտագործման կարգը.

ՀՀ կառավարությունը:

(ՀՀ ջրային օրենսգիրք, հոդված 24)

Հարց 62

Նշվածներից ո՞ր մարմինն է իրականացնում գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունը.

ՀՀ պետական կառավարման լիազորած մարմինը:

(«Գովազդի մասին» ՀՀ օրենք, հոդված 24)

Հարց 63

Ինչպիսի՞ հսկողություն են իրականացնում ՀՀ կառավարության լիազոր մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետության պատվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ.

իրավական և մասնագիտական հսկողություն:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 95)

Հարց 64

Ինչպիսի՞ կարգավիճակ ունեն միջհամայնքային միավորումները.

հանրային իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակ:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 100)

Հարց 65

Ո՞ր իրավական ակտով են սահմանվում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության կարգը.

ՀՀ ընտրական օրենսգրքով:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 66

Նշվածներից ո՞րն է տեղական ինքնակառավարման սկզբունք.

տեղական ինքնակառավարման իրավունքի իրականացումը՝ ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ, ընդհանուր, հավասար, ազատ ընտրական իրավունքի հիման վրա ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 67

Որտե՞ղ է գործում վարչական ղեկավարը.

համայնքի ավագանու որոշած նստավայրում:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 31)

Հարց 68

Ի՞նչ իրավունք ունի համայնքի ավագանու անդամը.

առաջարկություններ ներկայացնելու ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 20)

Հարց 69

Ի՞նչպես է ձևավորվում համայնքի ավագանու նիստի օրակարգի նախագիծը.

համայնքի ղեկավարի, ավագանու անդամների, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարների (այսուհետ՝ վարչական ղեկավար) կողմից աշխատակազմի քարտուղարին՝ նիստից առնվազն տասն օր առաջ ներկայացված գրավոր հարցերից:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 70

Ինչպե՞ս և ի՞նչ ձևով է ընդունվում վարչական ակտը.

վարչական ակտը, որպես կանոն, ընդունվում է գրավոր՝ որոշման, հրամանի, կարգադրության կամ օրենքով նախատեսված այլ ձևով:

(«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 54)

Հարց 71

Նշվածներից ո՞ր մարմինը կարող է դատական կարգով վիճարկել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և համայնքի ավագանու որոշումներին հակասող՝ համայնքի ղեկավարի որոշումները

համայնքի ավագանին:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 18)

Հարց 72

Քանի՞ վարչական ղեկավար ունի բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված, 500-ից ավելի հաշվառված բնակիչ ունեցող յուրաքանչյուր բնակավայր, բացառությամբ համայնքի կենտրոնի.

մեկ:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 31)

Հարց 73

Ե՞րբ է համայնքի ղեկավարը ստանձնում իր պաշտոնը.

ոչ շուտ, քան համայնքի նախորդ ղեկավարի լիազորությունների ավարտման հաջորդ օրը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 74

Համայնքի ղեկավարը, ավագանու որոշումների վերաբերյալ գրավոր առարկությունները կամ առաջարկությունները ի՞նչ ժամկետում է ներկայացնում.

եռօրյա ժամկետում:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16)

Հարց 75

Ու՞մ միջոցով է համայնքի ղեկավարն իրականացնում իր լիազորությունները.

համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 35)

Հարց 76

Ու՞ր են ուղղվում համայնքի սեփականություն համարվող գույքի օտարումից ստացվող ֆինանսական միջոցները.

համայնքի բյուջե:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 80)

Հարց 77

Ինչո՞վ է սահմանվում համայնքի ավագանու հանձնաժողովների քանակը, գործառույթները և ձևավորման կարգը.

համայնքի ավագանու կանոնակարգով:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 13)

Հարց 78

Նշվածներից ո՞ր մարմինն է կատարում ՀՀ տարածքի քաղաքաշինական կադաստրի վարումը և կադաստրային ամփոփումը.

քաղաքաշինական բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը:

(«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 20)

Հարց 79

Ո՞վ է համարվում համայնքի բնակիչ.

այն անձը, որը հաշվառված է տվյալ համայնքի բնակչության ռեգիստրում:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 4)

Հարց 80

Որո՞նք են տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները.

սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից օրենքով պատվիրակված՝ պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 81

Ինչպե՞ս են լուծվում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները.

համայնքի ավագանու սահմանած չափորոշիչներով:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 82

Ինչպե՞ս են իրականացվում պետության պատվիրակած լիազորությունները.

ՀՀ կառավարության սահմանած կարգով:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 83

Ո՞ր դեպքում կարող են իրականացվել համայնքի կամավոր խնդիրները.

միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 84

Համայնքի շահերին վերաբերող, բայց իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի առնչությամբ համայնքի ավագանին կարող է ընդունել.

ուղերձներ:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 13)

Հարց 85

Համայնքներում մինչև համայնքի ղեկավարի ընտրվելը ո՞վ է վարում համայնքի ավագանու նիստը.

ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 64)

Հարց 86

Ինչպե՞ս կարող է համայնքի ավագանին բողոքարկել համայնքի ղեկավարի որոշումները.

դատական կարգով:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16)

Հարց 87

Ե՞րբ կարող է համայնքի ավագանին համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ ներկայացնելու նախաձեռնություն ցուցաբերել.

համայնքի ղեկավարի լիազորություններն ստանձնելուց և անվստահության հարցը քննարկելուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 68)

Հարց 88

Նշվածներից ո՞րն է համայնքի ավագանու անդամի իրավունք.

նախապատրաստել և ավագանու քննարկմանը ներկայացնել հարցեր, որոշումների նախագծեր:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 20)

Հարց 89

Ե՞րբ է կազմվում համայնքի ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ արձանագրությունը.

եթե համայնքի ավագանու անդամի լիազորությունների դադարեցման հետևանքով անհնարին է դառնում համայնքի ավագանու հետագա նիստերի անցկացումը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 23)

Հարց 90

Ո՞ր պաշտոնն է անհամատեղելի համայնքի ղեկավարի պաշտոնի հետ.

համայնքի ղեկավարը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, կամ առևտրային կազմակերպություններում, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 25)

Հարց 91

Ի՞նչ հաճախականությամբ են անցկացվում համայնքի ավագանու նիստերը.

ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 13)

Հարց 92

Ո՞վ է իրականացնում համայնքապետարանի աշխատակազմի կառավարումը.

համայնքի ղեկավարը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 33)

Հարց 93

Ո՞րն է համայնքի բյուջեն.

եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 83)

Հարց 94

Նշվածներից ո՞րն է համայնքի ավագանու լիազորություն.

օրենքով սահմանված դեպքերում հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 18)

Հարց 95

Նշվածներից ո՞րն է համարվում համայնքի բյուջեի հարկային եկամտի տեսակ.

բնապահպանական վճարներից մասհանումները:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 86)

Հարց 96

Նշվածներից ո՞րն է հանդիսանում համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի լիազորություն.

օրենքով, նորմատիվ իրավական այլ ակտերով և աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների և գործառույթների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 33)

Հարց 97

Նշված եկամտատեսակներից որո՞նք են համարվում համայնքի բյուջեի պաշտոնական դրամաշնորհների ձևով ստացվող հատկացումներ.

պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 86)

Հարց 98

Ի՞նչ չափով կարող է նախատեսվել համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը.

համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտների 5-ից 30 տոկոսի:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 90)

Հարց 99

Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդը չի կարող գերազանցել՝

բյուջեի ֆոնդային մասի եկամուտների 30 տոկոսը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 90)

Հարց 100

Նշվածներից ո՞ր մարմինն է օրենքով սահմանված կարգով ապահովում համայնքի բյուջեի կատարումը.

համայնքի ղեկավարը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 38)

Հարց 101

Նշվածներից ո՞ր մարմինն է օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով իրականացնում համայնքի բյուջեի կատարման սպասարկումը.

պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի գանձապետարանը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 92)

Հարց 102

Ի՞նչ նորմատիվ իրավական ակտերով են սահմանվում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները.

1) ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 9)

Հարց 103

Ո՞ր իրավական ակտով է սահմանվում համայնքային ծառայողների պաշտոնի նշանակման և զբաղեցրած պաշտոնից ազատման կարգը.

1) «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 29)

Հարց 104

Ինչպե՞ս է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը իրականացնում տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողությունը.

1) անմիջականորեն կամ մարզպետների միջոցով՝ իր հաստատած հարցաշարերի հիման վրա:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 96)

Հարց 105

Համայնքների ավագանիների նախաձեռնությամբ ինչպե՞ս են ստեղծվում և լուծարվում միջհամայնքային միավորումները.

համայնքների ավագանիների ընդունած որոշումների հիման վրա:

(3) («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 101)

Հարց 106

Ո՞ր դեպքում է համայնքի ղեկավարի որոշումը համարվում չընդունված.

Եթե համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում համայնքի ավագանու որոշման վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16)

Հարց 107

Ի՞նչ իրավական ակտով են սահմանվում տեղական տուրքերի տեսակները և դրանց դրույքաչափերը.

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով:

(«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 108

Ե՞րբ է սկսվում և ավարտվում բյուջետային տարին.

սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

(«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 109

Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում բյուջետային վարկերի և փոխատվությունների տրամադրման կարգը.

ՀՀ կառավարությունը:

(«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 110

Ի՞նչ կառուցվածք ունի համայնքի բյուջեն.

վարչական մաս և ֆոնդային մաս:

(«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 28)

Հարց 111

Ի՞նչպես է պետական անտառներում իրականացվում երկրորդական անտառանյութի մթերումը.

անտառահատման տոմսի հիման վրա:

(ՀՀ անտառային օրենսգրքի 37-րդ հոդված)

Հարց 112

Ովքե՞ր իրավունք ունեն մասնակցելու տեղական հանրաքվեին.

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին ընտրելու իրավունք ունեցող անձինք:

(«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, հոդված 3)

Հարց 113

Ովքե՞ր ունեն տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունք.

տվյալ համայնքում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձինք, տվյալ համայնքի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը և համայնքի ղեկավարը:

(«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 114

Ո՞վ է հաստատում համայնքի զարգացման ծրագրերը.

համայնքի ավագանին:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 18)

Հարց 115

Ի՞նչպես է իրականանում անտառների պետական հաշվառումն.

հինգ տարին մեկ անգամ:

(ՀՀ անտառային օրենսգրքի 16-րդ հոդված)

Հարց 116

Նշվածներից ո՞ր մարմինն է տնօրինում համայնքի բյուջեի միջոցները.

համայնքի ղեկավարը։

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 38)

Հարց 117

Նշվածներից ո՞ր մարմինն է տալիս համայնքի տարածքում բացօթյա վաճառք, տոնավաճառներ կազմակերպելու թույլտվություն.

համայնքի ղեկավարը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 45)

Հարց 118

Ի՞նչ է համայնքը.

մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն է և վարչատարածքային միավոր։

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 4)

Հարց 119

Ինչպիսի՞ մարմին է համայնքի ավագանին.

համայնքի ներկայացուցչական մարմին է։

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 120

Ինչպիսի՞ մարմին է համայնքի ղեկավարը.

համայնքի գործադիր մարմինն է։

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 121

Ե՞րբ են իրենց լիազորությունները ստանձնում արտահերթ ընտրությունների միջոցով ընտրված համայնքի ղեկավարն ու ավագանու անդամները.

ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակման հաջորդ օրը։

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Հարց 122

Նշվածներից ո՞րն է տեղական ինքնակառավարման սկզբունք.

համայնքի իրավունքների, օրինական շահերի և սեփականության՝ օրենքով սահմանված կարգով պաշտպանությունը։

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 123

Նշվածներից ո՞րն է տեղական ինքնակառավարման սկզբունք.

տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը։

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 124

Ու՞մ որոշմամբ է հաստատվում համայնքի ավագանու նիստի օրակարգը.

համայնքի ավագանու։

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 14)

Հարց 125

Համայնքի ավագանու անդամը չի կարող միաժամանակ՝

զբաղեցնել ղեկավար պաշտոն համայնքային ենթակայության կազմակերպություններում։

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 19)

Հարց 126

Ի՞նչ է բյուջեի հավելուրդը.

բյուջեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 85)

Հարց 127

Ի՞նչ է բյուջեի դեֆիցիտը.

բյուջեի եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 85)

Հարց 128

Դեղերի, բժշկական արտադրատեսակների և բուժական մեթոդների գովազդը արգելվում է առանց.

ՀՀ առողջապահության նախարարության թույլտվության:

(«Գովազդի մասին» ՀՀ օրենք, հոդված 15)

Հարց 129

Կարո՞ղ է արդյոք գովազդը լինել հեղինակային իրավունքի օբյեկտ.

կարող է լինել՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն:

(«Գովազդի մասին» ՀՀ օրենք, հոդված 4)

Հարց 130

Յուրաքանչյուր լրատվության միջոցը ներկայացնող քանի՞ աշխատակից կարող է հավատարմագրել պետական մարմինը.

ոչ ավել, քան երկու լրագրող և երկու լուսանկարիչ կամ տեսաձայնագրման երկու օպերատոր:

(ՀՀ կառավարության 04.03.2004թ.«Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման օրինակելի կարգը հաստատելու մասին» N 333-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետ)

Հարց 131

Ի՞նչ իրավական ակտերով է սահմանվում անտառային հողերի գործառնական նշանակությունը.

ՀՀ անտառային օրենսգրքով և անտառային հողերի օգտագործման սխեմաներով (անտառօգտագործման նախագիծ):

(ՀՀ հողային օրենսգրքի 25-րդ հոդված)

Հարց 132

Ի՞նչ ժամկետով է կնքվում անտառների և անտառային հողերի վարձակալության պայմանագիրը.

մինչև 60 տարի:

(ՀՀ անտառային օրենսգրքի 50-րդ հոդված)

Հարց 133

Ի՞նչ սեփական լիազորություն է իրականացնում համայնքի ղեկավարը շրջակա միջավայրի պահպանության բնագավառում.

կազմակերպում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի և դրանց վրա գտնվող համայնքային նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների և համայնքային անտառների պահպանությունը:

(«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ

օրենք, հոդված 51)

Հարց 134

Ո՞րն է նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթուղթը.

ՀՀ կառավարության հաստատած օրինակելի կանոնադրության հիման վրա հիմնադրի (հիմնադիրների) հաստատած կանոնադրությունն է։

(«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ

օրենք, հոդված 21)

Հարց 135

Նախադպրոցական ուսումնական հաստատությունները կարող են լինել.

պետական, համայնքային ենթակայության և ոչ պետական։

(«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 21)

Հարց 136

Ի՞նչ կարգով են ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի անդամները մասնակցում ուսումնական հաստատության կառավարմանը.

խորհրդակցական ձայնի իրավունքով։

(«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 10)

Հարց 137

Ուսումնական տարին բաղկացած է՝

ուսումնական շաբաթներից, քննաշրջաններից և արձակուրդներից։

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 15)

Հարց 138

ՀՀ-ում տասներկուամյա միջնակարգ կամ մասնագիտական կրթությունը պարտադիր է՝

մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ։

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 18)

Հարց 139

Ուսումնական հաստատության առաջին դասարան ընդունվում են այն երեխաները, որոնց՝

վեց տարին լրացել կամ լրանում է տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ։

(«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 16)

Հարց 140

Քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման հաստատման, փոփոխման կարգերը սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

(«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 17)

Հարց 141

Հողօգտագործումը քաղաքաշինական գործունեության բնագավառում իրականացվում է՝

նպատակային՝ հաստատված տարածական պլանավորման փաստաթղթերին, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքին և իրավական այլ ակտերին համապատասխան։

(«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 18)

Հարց 142

Ովքե՞ր կարող են իրականացնել բացօթյա առևտուր.

միայն օրենսդրությանը համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թույլտվություն ստացած իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը։

(«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 5.1)

Հարց 143

Որտե՞ղ է արգելվում ալկոհոլային խմիչքների վաճառքը.

ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող առևտրի օբյեկտներում։

(«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ
օրենք, հոդված 9)

Հարց 144

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, տնտեսավարող սուբյեկտի շահերի և իրավունքների պաշտպանության նպատակով, իրավունք ունի.

հսկողության իրականացմանը մասնակից դարձնել մասնագետների, փորձագետների, փաստաբանների։

(«Առևտրի և ծառայությունների
մասին» ՀՀ օրենք, հոդված 17.1)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ